

Վ. Պիլէղիկճեան, կը գրէ ինձ (16 Հոկտ. 1906).  
 “Ծաղկոցիկը աչքէ անցուցի. կաթողիկէ վարդապետութեան հակառակ բան աչքիս չհանդիպեցաւ. քրիստոսի բնութեանց վրայ խօսք չկայ. Վերջին օժման մէջ բացայայտ կը դնէ որ այս խորհուրդը իւղով օծելով կը պաշտուի. ամբողջը կաթողիկեայ քրիստոնէականի տպաւորութիւնը կ'ընէ: Հաւատամքի մեկնութիւնն ալ լատինաց հաւատամքի մեկնութիւնն է կարծես՝ ինչպէս որ ամէն քրիստոնէականի մէջ կը գտնուի: “Հայաստանեայց եկեղեցի”, բացատրութիւնն ալ ամենեւին աչքիս չհանդիպեցաւ, այլ առիթը հանդիպելուն՝ “Մայրս մեր կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի” կ'ըսէ:

Սարգսի 1747էն մինչեւ 1752 Վենետիկի մէջ անցուցած կեանքէն եւ ուրիշ գործերէն գրեթէ բան մը ծանօթ չէ: Իր թղթերուն մէջ կը գտնուի միայն 16 Սեպտ. 1748 թուակիր նամակ մը ի Ս. Ժողովոյ (Դիւան Լիվ.), որով Ս. Քահանայապետն Բենեդ. ԺԴ. հրաման կու տայ իրեն ըստ խնդրանացն՝ որ Սարգիս Արքեպ. կարենայ քահանայ ձեռնադրել 25 տարեկան կղերիկօսն, Ղալաթիացի Սարգիս Աստուածատուրեանը, Հայոց մէջ միսիօնի երթալու համար, եւ թոյլ կու տայ որ ձեռնադրութենէն ետեւ երկու տարի Սարգիս Արքեպ. ի ծառայութեան մէջ մնայ: Նաեւ Հ. Մատթ. Եւդոկիացի կ'աւանդէ (Դիւ. Մխիթ. Վենետ.) Մխիթար Արքահօր երջանիկ փոխման եւ յուղարկաւորութեան ստորագրութեան մէջ. “1749 Ապր.